# ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

# «ՋՐԱԲԵՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

# 2023-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

**ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ՝**

**ԱՆԱՀԻՏ ՍԱՄՎԵԼԻ ՄԱԴԱԹՅԱՆ**

**ՋՐԱԲԵՐ 2023Թ.**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Ներածություն........................................................................................................................................................................ 3

Ներկա վիճակի վերլուծություն ............................................................................................................................................ 4

Իրավական հիմքեր ............................................................................................................................................................ 6

Հաստատության գործունեություն ................................................................................................................................... 8

Իրավիճակի վերլուծություն, ուժեղ և թույլ կողմերը .......................................................................................................... 9

Նպատակների և խնդիրների սահմանում ......................................................................................................................... 50

Ուսումնական հաստատության գործունեությունը ......................................................................................................... 52

Սահմանված նպատակների ու խնդիրների իրականացումն ապահովող գործողություններն և միջոցառումները ................... 54

Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարման պատասխանատուները ........................................................ 54

Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարման արդյունքների գնահատման չափանիշները .......................... 54

Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման ռիսկերը ........................................................................ 54

Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները........................................................................................................................................................ 54

Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման վերահսկողության մեխանիզմները ................................. 58

Եզրափակում.......................................................................................................................................................................... 66

Հավելված.............................................................................................................................................................................. 67

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2023-2028թթ.զարգացման ծրագիրը մշակվել է վերջին հինգ տարիների ծրագրի կատարողականների, ինչպես նաև կրթության ոլորտում այս պահին իրականացվող արմատական փոփոխությունների հիմնական ուղենիշների հիման վրա, որոնց արդյունքում վերանայվել է մինչև այժմ գոյություն ունեցող կրթության հայեցակարգը՝ շեշտը դնելով ստեղծագործող մարդու և ապագա քաղաքացու կրթության և դաստիարակության վրա: Ծրագրի հիմքում դրվել են ՀՀ կառավարության կողմից հաստատված կրթության առանձին ոլորտների ռազմավարական ծրագրերը և զարգացման հայեցակարգերն ու առանձնահատկությունները: Ուսումնական հաստատությունը րի կառավարման ընթացքում ղեկավարվել է ՀՀ օրենսդրությամբ և դպրոցի կանոնադրությամբ:

Ծրագիրը մշակելիս իրականացվել են հանդիպումներ և ներկայացուցչական հարցումներ աշակերտների, ծնողների և մանկավարժների շրջանում, որի արդյունքներիը ներառվել են ռազմավարության տարբեր հատվածներում:

Սույն դպրոցի զարգացման ծրագիրը մշակելու համար կատարել եմ հետևյալ հաջորդական քայլերը.

- Ծրագրային նպատակները, խնդիրները և միջոցառումները սահմանելուց հետո կատարել եմ գործունեության պլանավորում
- Վերլուծել եմ առկա իրավիճակը, նշել եմ ուժեղ և թույլ կողմերը, բացահայտել եղած հիմնախնդիրները
- Սահմանել եմ զարգացման հիմնական նպատակներն ուն դրանցից բխող խնդիրները
- Սահմանել եմ դպրոցի զարգացման գերակայությունները, մշակել եմ կատարման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական միջոցները
- Ձևակերպել եմ ծրագրի ակնկալվող արդյունքները

Մշակման ընթացքում խորհրդատվական հանդիպումներ են տեղի ունեցել կառավարման խորհրդի անդամների, աշակերտների, ոլորտը ներկայացնող մասնագետների, համայնքի այլ դերակատարների հետ՝ բացահայտելու լրացուցիչ կարիքները և կրթական ժամանակակից միտումները:

Ծրագրի մշակմանը իրենց զգալի մասնակցությունն են ունեցել մեթոդ միավորումները և դպրոցի անձնակազմը: Ծրագիրի մշակմանը նախորդող ամիսների ընթացքում կազմակերպվել են կարիքների բացահայտման հանդիպումներ և քննարկումներ, վեր են հանվել որակի կառավարմանը, մեթոդական գործիքակազմին, գնահատման և մշտադիտարկման մեխանիզմներին, ռիսկերի արդյունավետ գնահատմանը առնչվող խնդիրներ: Առաջարկվել են հիմնավոր լուծումներ և գործողություններ:

Ծրագրի բուն նպատակն է ստեղծել դպրոցական այնպիսի մոդել, որը կապահովի մատչելի և որակյալ կրթություն՝ Հայաստանի Հանրապետության սոցիալտնտեսական ոլորտի նորարարական զարգացման պահանջներին համապատասխան: Այն պետք է նպատակաուղղված լինի ներդաշնակ զարգացած սոցիալապես պատասխանատու անհատի դաստիարակմանն ու ձևավորմանը՝ Հայաստանի Հանապետության ժողովրդի բարոյական և հոգևոր արժեքների, ազգային մշակույթի և պատմական ավանդույթների վրա:

Ծրագիրը պլանավորում և սահմանում է աշխատանքը հաստատությունում, հստակեցնում նպատակներն ու խնդիրները, միջոցառումների և գործողությունների հաջորդականությունը և ժամանակացույցը: Ծրագրում մանրամասն սահմանվում են հիմնական նպատակներն ու խնդիրները, ներկայացվում են դպրոցի ուժեղ և թույլ կողմերը:

## ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզի Ձրաբերի միջնակարգ դպրոցը շահագործման է հանձնվել 2000թ.: Դպրոցի շենքը հարմարեցված է:

Դասարանները ապահովված են համապատասխան գույքով, դպրոցը ունի 5 համակարգիչ, 5 պլանշետ, 3 նոութբուք, 1 պրոյեկտոր, 2 բազմաֆունկցիոնալ տպիչ, 1 սկաներ, բարձրախոսների հավաքածու, բոլոր դասասենյակներում փոխվել են գրատախտակները: Դպրոցի բակում 2021թ-ից ունենք բացօթյա դասարան, կերպարվեստի դասաժամին յուրաքանչյուր աշակերտ ունի իր մոլբերտը: Դպրոցը չունի սպորտդահլիճ, հանդիսությունների սրահ:

Ջրաբերի միջնակարգ դպրոցը՝ համավարակով պայմանավորված, սահմանափակումների առաջին օրերից սահուն անցում է կատարել առկա կրթությունից հեռավարի՝ ապահովելով աշակերտների 95% մասնակցություն: Կրթական մարտահրավերներին և ֆորսմաժորային իրավիճակներին դպրոցի արագ և արդյունավետ արձագանքելու կարողությունը նկարագրում է կրթօջախում աշխատող մարդկանց ընդհանուր տեսլականի և նպատակների շուրջ համախմբվածության մասին:

Ամենաբարդ իրավիճակներում դպրոցում յուրաքանչյուրն ունի գիտակցում, որ բարձրորակ կրթություն մատուցելն ու հայրենիք շենացնող սերնդի դաստիարակությունը ոչ թե լոկ աշխատանք է, այլ գոյաբանական խնդիր: Դպրոցը մասնակցություն է ունեցել տարբեր կրթամշակութային ծրագրեր, առարկայական օլիմպիադաների, 2022թ. դպրոցի տաղանդավոր աշակետները մասնակցել են ազգային երաժշտական փառատոնի և զբաղեցրել են պատվավոր 1-ին տեղը: 2022թ. դպրոցը առաջիններից մեկն էր հանրապետությունում, որ մասնակցություն ունեցավ ԿՁՆԱԿ հիմնադրամի կողմից կազմակերպած ՙՙԻմ կյանքը համայնքում՚՚ ծրագրին և արժանացավ ԿԳՄՍ նախարարության կողմից շնորհակալագրի: Դպրոցը համագործակցում է մի շարք հասարակական կազմակերպությունների՝ Ցեղասպանության թանգարան ինստիտուտի, ՀՀ Կենտրոնական բանկի, Ջարթնի ՀԿ-ի, ԿՁՆԱԿ հիմնադրամի, Կոտայքի ՏՄԱԿ-ի, Հայաստանի պատանեկան նվաճումներ կազմակերպության հետ: Վերջինիս համագործակցության արդյունքում 2018 թվականից դպրոցական բաղադրիչի ժամաքանակի հաշվին 10-րդ և 11-րդ դասարանի աշակերտները ուսումնասիրում են Ձեռնարկատիրական կրթություն առարկան, առարկայի ուսումնասիրության շրջանակներում դպրոցում ստեղծվել ԱԳԸ, որը թողարկում է իր արտադրանքը: Աշակերտները մասնակցում են համադպրոցական տոնավաճառներին, իսկ այս տարի համադպրոցակա տոնավաճառին Կոտայքի մարզից կմասնակցի միայն մեր դպրոցը:

Ուսումնառության պրոցեսում առանձնահատուկ կերպով շեշտադրվում է ապահով համացանցի կարևորությունը, թվային կրթությունը, միջմշակութային հաղորդակցությունն ու սերտ համագործակցությունը, ՏՀՏ-ի կիրառումը դասապրոցեսին: Սովորողները ստանում են առաջադրանքներ, ինքնուրույն կատարում հետազոտություններ, սովորողից փոխվում են սովորեցնողի:

Դպրոցի զարգածման ծրագիրը բարելավման ռազմավարական ծրագիր է: Այն պետք է հստակ և պարզ ձևով իմի բերի դպրոցի առաջնահերթությունները, այն հիմնական միջոցները, որոնք նա կձեռնարկի չափանիշները բարձրացնելու համար:

| Փաստաթղթերի անվանում | Ջրաբերի միջնակարգ դպրոցի զարգացման ծրագիր 2023-2028թթ. |
| --- | --- |
| Իրավական հիմքեր | ✓ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք<br>✓ «Կրթության մասին» ՀՀ օրենք<br>✓ Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգ<br>✓ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենք<br>✓ «Լիցենզավորման մասին» օրենք<br>✓ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք<br>✓ Հանրակրթության պետական չափորոշիչ<br>✓ Կրթության ոլորտը կարգավորող կարգեր, կառավարության որոշումներ, հրամաններ<br>✓ «Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենք<br>✓ «Ստանդարտացման մասին» օրենք<br>✓ «ՀՀ կառավարության 2010թ. ապրիլի 8-ի N439-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում<br>✓ Դպրոցի կանոնադրություն<br>✓ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 26.08.2022թ. N21-L հրաման<br>✓ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 22.09.2022թ. N35-Ն հրաման |

| | |
|---|---|
| | ✓ «Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա»<br>✓ Ներքին իրավական ակտեր |

**Հաստատության գործունեություն**

Դպրոցը հիմնադրվել է 1936 թվականին, սակայն 2000 թվականին դպրոցը տեղափոխվել է նոր հարմարեցված շենք:

Դպրոցը ստեղծվել է ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ‘‘Ջրաբերի միջնակարգ դպրոց’’ /վկայական 03 Ա 057300, հաշվառման համար 42.210.01978, ծածկագիր 10008511, 18. հունվար 2003թ,/ պետական հիմնարկի վերակազմավորման իրավահաջորդը փոխանցման ակտին համապատասխան:

Շենքը հարմարեցված է՝ հարմարեցված կրթական ծրագրեր իրականացվող ուսումնական հաստատությունների պահանջներին:

Հաստատության հասցեն՝ ՀՀ, Կոտայքի մարզ Բյուրեղավան համայնք գ. Ջրաբեր 1-ին փողոց 24 շենք:

Դպրոցի էլեկտրոնային հասցե՝ jraber@schoos.am

Կայք՝ https://jraber.schoolsite.am

Սոց. կայք՝ /www.facebook.com/JraberMijDproc

Դպրոցն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

Համաձայն տրված լիցենզիայի՝ դպրոցն իրավունք ունի իրականացնելու հետևյալ կրթական ծրագրերը՝

- ✓ Տարրական ընդհանուր 1-ին աստիճան Ա N 0061 /տրված 30 հուլիս 2010թ./ , համակազմի սահմանային թիվը՝ 40:
- ✓ Հիմնական ընդհանուր 2-րդ աստիճան Ա N 0056 /տրված 30 հուլիս 2010թ./, համակազմի սահմանային թիվը՝ 55:
- ✓ Միջնակարգ ընդհանուր 3-րդ աստիճան Ա N 0056 /տրված 30 հուլիս 2010թ./, համակազմի սահմանային թիվը՝ 25:

2022-2023 ուսումնական տարում դպրոցում կոմպլեկտավորվել է 7 դասարան, որից 4-ը՝ երկհամակազմ են, դպրոցում սովորում է 43 աշակերտ

- ✓ Տարրական դպրոց՝ 11 աշակերտ
- ✓ Միջին դպրոց՝  20 աշակերտ
- ✓ Ավագ դպրոց՝ 12 աշակերտ

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտ այս պահի դրությամբ դպրոցում չկա:

Դպրոցում աշխատում է  16 մանկավարժ:

Ուսումնական գործընթացը կազմակերպվում է հնգօրյա աշխատանքային շաբաթով:

1. **ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ. ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ**

**1.1Ուսումնական հաստատության շենքային պայմանների վերլուծություն**

**1.2 Ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազայի վերլուծություն**

| ԱՆՎԱՆՈՒՄ | ՔԱՆԱԿ/ՉԱՓ | ՆՇՈՒՄՆԵՐ |
|---|---|---|
| Գրադարան/ընթերցասրահ | 1 | Գերազանց վիճակ, վերանորոգվել և համալրվել է գույքով 2019թ. |
| Ճաշարան | 1 | Գերազանց վիճակ, վերանորոգվել և համալրվել է ամբողջությամբ նոր գույքով   2022թ. |
| Խոհանոց | 1 | Գերազանց վիճակ, վերանորոգվել և համալրվել է ամբողջությամբ |

| | | |
|---|---|---|
| | | նոր գույքով և տեխնիկայով 2022թ. |
| Սանհանգույցներ | 3 | Գերազանց, վերակառուցվել է 2021թ., ունի շուրջօրյա տաք և սառը ջուր |
| Լոկալ ջեռուցման համակարգ | 1 | Գերազանց վիճակ, տեղադրվել է 2018թ նոյեմբերին |
| Դասարանների քանակ | 7 | Մեծ մասը վերանորոգվել են 2018-2022թթ. |
| Առարկայական կաբինետ | 1 | Կարիք ունի վերանորոգման |
| Ուսուցչանոց | 1 | Վերանորոգվել է 2019թ. |
| Պահեստ | 1 | Գերազանց վիճակ, վերաներոգվել և համալրվել է համապատասխան գույքոն 2022թ |
| Պահակակետ | 1 | Գերազանց վիճակ, վերանորոգվել է 2022թ. |
| Խաղադաշտ | 1 | Կառուցվել է 2018թ, հագեցած է ֆուտբոլի, բասկետբոլի, վոլեյբոլի համար համապատասխան գոյքով, պտտաձողով և այլն |
| Հանդիսությունների դահիլ | 0 | |
| Սպորտ դահլիճ | 0 | |
| Լաբորատորիա | 0 | |
| Գրքերի ընդհանուր թիվ | 6515 | Պարբերաբար համալրվում է նոր գրքերով |
| Պրոյեկտոր | 1 | Գերազանց վիճակ, 2021թ. |
| Էկրան | 1 | Լավ |
| Բազմաֆունկցիոնալ տպիչ | 2 | Գերազանց վիճակ 2016 և 2022թթ. |
| Դյուրակիր համակարգիչ | 3 | 1 լավ, 2 գերազանց |
| Համակարգիչներ | 5 | Բավարար |
| Պլանշետ | 5 | Գերազանց վիճակ, 2020թ. |

| | | |
|---|---|---|
| Սքաներ | 1 | Լավ |
| Լազերային տպիչ | 2 | Բավարար |
| Կրակմարիչներ | 3 | Գերազանց |
| Հրշեջ վահանակ | 1 | Գերազանց |
| Ազդանշանային սարք | 1 | Գերազանց |
| Բարձախոսերի հավաքածու | 1 | Գերազանց վիճակ. 2021թ |
| Բենզինային վառելիքով խոտհնձիչ | 1 | Գերազանց վիճակ 2021թ. |
| Գրատախտակներ | 7 | Գերազանց վիճակ, 2019թ. |
| Կարի մեքենաներ | 3 | |
| Մոլբերտ | 5 | Գերազանց վիճակ, 2022թ. |
| Հարիչ | 1 | Գերազանց վիճակ, 2022թ. |
| Սառնարան | 1 | Գերազանց վիճակ, 2022թ. |
| Էլեկտրական ջրատաքացուցուչ | 1 | Գերազանց վիճակ, 2022թ. |
| Էլեկտրական վառարաններ | 2 | Գերազանց վիճակ, 2022թ. |
| Էլեկտրական վառարան սալիկներով | 1 | Գերազանց վիճակ, 2022թ. |

**1.3 Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծություն**

Տնօրենը՝ համագործակցելով դպրոցի կառավարման մարմնի՝ խորհրդի հետ, արդյունավետ աշխատանք է կատարում ի շահ հաստատության:

2018թ. հաստատության խորհուրդը ընտրել է տնօրեն և հաշվետու ժամանակաշրջանում

- ✓ Իրականացրել է տնօրենի գործունեության նկատմամբ ընթացիկ վերահսկողություն

- ✓ Հաստատել է դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական, այդ թվում աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները
- ✓ Քննարկել և հավանություն է տվել դպրոցի հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակներին
- ✓ Տնօրենի ներկայացմամբ քննարկել է ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաջորդ տարվա բյուջեի նախագիծը, բյուջետային ֆինանսավորման հայտը, հաստիքացուցակը, տարիֆիկացիոն ցուցակները, հավանություն է տվել
- ✓ Քննարկել է ֆինանսատնտեսական, ուսումնադաստիարակչական գործունեության, այդ թվում մանկավարժահոգեբանական աջակցությունների ծառայությունների մասին մասին հաշվետվությունները
- ✓ Քննարկել է ներքին գնահատման արդյունքները
- ✓ Վերահսկել է դպրոցի զարգացման ծրագրի կատարումը՝ քննարկելով դպրոցի տնօրենի կողմից ներկայացված հաշվետվությունները
- ✓ Հաստատել է իր աշխատակարգը և ընտրել խորհրդի նախագահ
- ✓ Իրականացրել է օրենքով, հիմնադրի կողմից իրեն վերապահված և /կամ/ դպրոցի կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

**Դպրոցի տնօրենը՝**

- ✓ Խորհրդի քննարկմանն է ներկայացրել դպրոցի ֆինանսատնտեսական, ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվությունը, ներքին գնահատման արդյունքները, հաջորդ տարվա բյուջեի նախագիծը և բյուջետային ֆինանսավորման մասին հայտը
- ✓ Կազմել է դպրոցի տարիֆիկացիան, հաստիքային ցուցակը և ամենամյա ծախսերի նախահաշիվը և հաստատության խորհրդի հավանությամբ ներկայացրել լիազորված մարմին
- ✓ Աջակցել է դպրոցի խորհրդակցական մարմինների աշխատանքներին,

- ✓ Մանկավարժական խորհրդի ներկայացմամբ հաստատել է հաստատության ուսումնական պլանը, ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը, դասղեկների, առարկայական մեթոդական միավորումների նախագահների աշխատանքների տարեկան աշխատանքային պլանները
- ✓ Մասնակցել է Խորհրդի նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով
- ✓ Նախարարության կողմից հաստատված ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգի հիման վրա մշակել և Խորհրդի հաստատմանն է ներկայացրել դպրոցի ուսուցչի թափուր տեղի համար անցկացվելիք մրցույթի կարգը, դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական, այդ թվում ‘‘Ուսումնական հաստատության ներքին կարգապահական կանոնները’’:
- ✓ Համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի անցկացրել է ուսուցչի թափուր տեղի համար մրցույթը, մանկավար-ական և այլ կադրերի ընտրությունը, կնքել և լուծել աշխատանքային պայմանագրեր, բաշխել աշխատանքը
- ✓ Խրախուսել և խթանել է աշխատակիցների ստեղծագործական նախաձեռնությունը
- ✓ Իրականացրել է վերահսկողություն դասավանդման բովանդակության, սովորողների գիտելիքների յուրացման որակի, նրանց վարքի, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման, դպրոցի աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ
- ✓ Ուսոմնական պլանին համապատասխան ապահովել է կրթական ծրագրերի իրականացումը, կրթական գործընթացի կազմակերպումը և կրում է պատասխանատվություն կրթության որակի և բովանդակության համար
- ✓ Օրենքով սահմանված կարգով կրել է պատասխանատվություն ներքին կարգապահական կանոնների մշակման, ներդրման, սովորողների կյանքի և առողջության պահպանման, սանիտարահիգենիկ վիճակի, անվտանգության տեխնիկայի ապահովման, ինչպես նաև սովորողների ու աշակերտների իրավունքների և ազատությունների պաշտպանության համար
- ✓ Ապահովել է լիազորված մարմնի՝ ՀՀ օրենսդրությանը չհակասող հանձնարարականների կատարումը
- ✓ Ապահովել է դպրոցում բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորումը
- ✓ Ապահովել է բյուջետային հատկացումների, հիմնադրի և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից օրենքով սահմանված կարգով ստացված միջոցների արդյունավետ օգտագործումը, ուսումնանյութական բազայի հաշվառումը, պահպանումը, համալրումը
- ✓ Ապահովել է դպրոցում գործածության ենթակա փաստաթղթերի վարումը և պահպանումը

- ✓ Սահմանված կարգով ձևավորել է դպրոցի սովորողների համակազմը, ապահովել նրանց սոցիալական պաշտպանվածությունը
- ✓ Ներկայացրել է դպրոցը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններում
- ✓ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է դպրոցի գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները
- ✓ Օրենքով և դպրոցի կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակել է հրամաններ, հրահանգներ, տվել կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկել դրանց կատարմանը
- ✓ Յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 1-ից սկսած պլանավորել և կազմել է դպրոցի առաջիկա տարվա բյուջեի նախագիծը:

**1.4 Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ**

1.Դպրոցը կրթական գործունեությունն իրականացնում է ի շահ հասարակության և պետության, ապահովում է աշակերտների կողմից հանրակրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը, անհատի բազմակողմանի զարգացումը, նրա առողջության պահպանումը,պայմաններ ստեղծում ինքնակրթության համար:

2.Դպրոցի գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության և մարդասիրության, հանրամատչելիության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնակրթության և կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա: Դպրոցը պատասխանատու է պետական չափանիշներին, հանրակրթական պետական ծրագրերին, սովորողների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրության, ինչպես նաև նրանց կյանքի անվտանգության և առողջության պահպանման համար:

**1.5 Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացում**

Ուսուցիչների մասնագիտական որակների զարգացումն են ապահովում հաստատությունում և վերապատրաստող կազմակերպություններում պարբերաբար կազմակերպվող տարատեսակ միջոցառումները, դասընթացները, սեմինար պարապմունքները, խորհրդատվությունները ու խորհրդակցություններ:

Մանկավարժական օրինակելի աշխատանքի համար ուսուցիչները բազմիցս արժանացել են դպրոցի տնօրենի խրախուսանքին / պատվոգրեր, շնորհակալագրեր/:

| | | |
|---|---|---|
| 1. | Ուսուցիչների ընդհանուր թիվը | 15 |
| 2. | Վարչական աշխատող | 1 |
| 3. | Սովորողների ընդհանուր թիվը | 43 |
| 4. | Բարձրագույն կրթությամբ ուսուցիչների թիվը | 15 |
| 5. | Տարակարգ ունեցող ուսուցիչների թիվը | 1 |
| 6. | Համատեղությամբ աշխատող ուսուցիչների թիվը | 2 ուսուցիչ |
| 7. | Ուսուցիչ սովորող փոխհարաբերությունը | 43/16 ≈3 |
| 8. | Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը | 14.1% |
| 9. | Առարկայական մեթոդ միավորումներ | 2 |

**1.6 Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների և նորարարությունների ներկայացում**

Կրթական գործընթացի ապահովումը տեղեկատվական տեխնոլոգիաների նկատմամբ, որոնց կիրառմանը հասել ենք մանկավարժական համակազմի մասնագիտական կատարելագործման շնորհիվ, նպաստել է արդյունավետ ուսումնառության կազմակերպմանը: Դպրոցն ունի համակարգչային դասասենյակ՝ բավարար հագեցվածությամբ, որը կիրառվում է ինֆորմատիկա առարկայի դասաժամերը, գործնական

աշխատանքները նպատակային և լիարժեք կազմակերպելու, իրականացնելու և տարբեր ինտեգրված համակարգչային դասեր անցկացնելու համար: Կրթական գործընթացի ապահովումը տեղեկատվական տեխնոլոգիաների նկատմամբ, որոնց կիրառմանը հասել ենք մանկավարժական համակազմի մասնագիտական կատարելագործման շնորհիվ, նպաստել է արդյունավետ ուսումնառության կազմակերպմանը:

Հաստատությունը ուսումնադաստիարակչական աշխատանքն առավել արդյունավեր դարձնելու նպատակով մշտապես օգտվում է հետևյալ կայքերից՝ դառնալով և՛ մասնակից, և՛ կատարող.

- ✓ Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն /ԿՏԱԿ/
- ✓ Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն հիմնադրամ /ԿԶՆԱԿ/
- ✓ Հայկական կրթական միջավայր պորտալ՝ http.//www armedu.am/
- ✓ Պաշարների շտեմարան՝ http.//lib.armedu.am
- ✓ Հեռավար ուսուցման համակարգ՝ http.//iearning.am
- ✓ Հայկական ծրագրեր

**1.7 Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն**

Չափորոշչի պահանջները պարտադիր են հանրակրթական հիմնական և այլընտրանքային ծրագրերի, այդ թվում՝ առարկայական ծրագրերի, ուսումնական պլանների, դասագրքերի և ուսումնական գործընթացի բովանդակությանն առնչվող այլ ուսումնական նյութերի համար: Չափորոշիչը նպատակաուղղված է հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթության քաղաքականության ապահովմանը: Հանրակրթական հիմնական ծրագրերը (տարրական, հիմնական և միջնակարգ) մշակվում են Չափորոշչի նորմերի և դրույթների համաձայն: Չափորոշչի պահանջները պարտադիր են հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների համար՝ անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից և ենթակայությունից:

Հանրակրթական տարրական, հիմնական և միջնակարգ ծրագրերի սովորողների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները նկարագրում են, թե հանրակրթական հիմնական ծրագրերի կրթական աստիճանների ավարտին սովորողը ինչ պիտի իմանա, կարողանա անել և հասկանա: Վերջնարդյունքներն ուղղված են կարողունակությունների ձևավորմանը:

Հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակությունը նպատակաուղղված է ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների միջոցով կարողունակությունների ձևավորմանը, ներկայացված է բովանդակության բաղադրիչներով, ուսումնական բնագավառներով և որոշակիացվում է ուսումնական առարկաների ծրագրերում: Հանրակրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը սահմանվում է ըստ կրթական ծրագրերի աստիճանների՝ ուսումնական բնագավառների ուղղվածությանը համապատասխան առարկայական չափորոշիչների, ծրագրերի միջոցով և ՀՊՉ-ի համաձայն ներառում է հանրակրթության ընդհանուր նպատակներին համապատասխան ընտրված ու սովորողի կողմից յուրացման համար նախատեսված գիտելիքները, մանկավարժորեն և հոգեբանորեն չափորոշված-հարմարեցված սոցիալական փորձը, մշակութային, բարոյական ու գեղագիտական, ազգային և համամարդկային արժեքները:

Չափորոշչով կսահմանվեն հանրակրթության հիմնական ծրագրերի բովանդակության հետևյալ բաղադրիչները՝

- ✓ Գիտելիք
- ✓ Հմտություն
- ✓ Դիրքորոշում
- ✓ Արժեք

Չափորոշչով սահմանված յուրաքանչյուր ուսումնական բնագավառ կներառի իր ուղղվածությանը համապատասխան մեկ կամ մի քանի ուսումնական առարկաներ և (կամ) դասընթացներ: Ուսումնական պլանում կներառվեն առարկաներ, որոնց բովանդակությունն առնչվում է մի քանի ուսումնական բնագավառների: Հանրակրթական ծրագրի բովանդակությունն կարտացոլվի ուսումնական առարկաների ծրագրերում: Հանրակրթական հիմնական ծրագրերի յուրաքանչյուր կրթական աստիճանի առարկայացանկն կամրագրվի ուսումնական հաստատության ուսումնական պլանում: Հանրակրթական հիմնական ծրագրերի իրականացման ժամանակ պարտադիր է հայոց լեզվի և գրականության, հայոց պատմության, մաթեմատիկայի և առնվազն մեկ օտար լեզվի ուսուցանումը՝ առանձին կամ ինտեգրված առարկաների ձևով: Ուսումնառության արդյունքների գնահատումը կորոշի սովորողի մոտ կարողունակության զարգացման աստիճանը ըստ ուսումնական առարկաների

չափորոշչով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիտելիքների և հմտությունների մակարդակը, ինչպես նաև դիրքորոշումները ու արժեքների ձևավորումը: Հանրակրթական ուսումնական հաստատությունում ընթացիկ գնահատումն կիրականացնի քանակական (միավորային) և ձևավորող (ուսուցանող) ձևերով՝ դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից հաստատված կարգով: Քանակական (միավորային) գնահատման համար կկիրառվի 10 միավորային սանդղակ: 10 միավորային սանդղակում որևէ թիվ չի հանդիսանա անբավարար գնահատական, և յուրաքանչյուր նիշ կնկարագրրի աշակերտի հաջողության որևէ մակարդակ: Քանակական գնահատումը ցույց կտա աշակերտի ուսումնական հաջողությունները, որը կսկսվի 1 միավորից և չի ունենա անբավարար սանդղակ: Ուսումնական հաստատությունները հնարավորությունկունենա կիրառել գնահատման այլ համակարգ, որը կհամապատասխանեցվի 10 միավորային սանդղակին: Ձևավորող (ուսուցանող) գնահատման մեթոդներն ու ձևաչափն կընտրի ուսումնական հաստատությունը: Ուսումնական հաստատությունում գնահատումն կիրականացվի ուսումնական տարվա ընթացքում (ընթացիկ), կիսամյակի և ուսումնական տարվա ավարտին (ամփոփիչ) և հանրակրթական ծրագրի յուրաքանչյուր աստիճանի ավարտին (ամփոփիչ ատեստավորում): Ամփոփիչ ատեստավորումն կիրականացվի կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով: 1-4-րդ դասարաններում և 5-րդ դասարանի առաջին կիսամյակում միավորային գնահատում չի իրականացվի: Ընթացիկ գնահատումը կկատարվի բնութագրման միջոցով, իսկ, որպես տարեկան ամփոփիչ գնահատական, կկազմվի յուրաքանչյուր սովորողի ուսումնական առաջադիմության բնութագիրը՝ համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի: Միավորային գնահատումը կկիրառվի սկսած 5-րդ դասարանի երկրորդ կիսամյակից: 7-12-րդ դասարաններում յուրաքանչյուր աշակերտ տարեկան կիրականացնի առնվազն մեկ ուսումնական նախագիծ՝ իր ընտրած առարկայից կամ առարկաներից: Սովորողների ընթացիկ գնահատականների հիման վրա կիսամյակային, իսկ կիսամյակային գնահատականների հիման վրա՝ տարեկան գնահատականները կձևավորվեն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով: Հանրակրթական ծրագրի յուրաքանչյուր աստիճանի ավարտին կիրականացվի պետական ամփոփիչ ատեստավորում՝ համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի գիտելիքների քանակական (միավորային) ընթացիկ գնահատումն ու ամփոփիչ ատեստավորումը կիրականացվի ըստ իրենց անհատական ուսուցման պլանի՝ 10 միավորային սանդղակով:

## 1.8 Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն

Դպրոցում նախորդ ուսումնական տարիներին եղել են ԿԱՊԿՈՒ սովորողներ, որոնց կարիքը վկայագրված է եղել, նրանք ինտեգրված են եղել դասարանների համակազմերում: Նրանք մասնակցել են դպրոցի բոլոր միջոցառումներին որպես մասնակից, որպես կազմակերպող, որպես հանդիսատես, ինչպես նաև նախաձեռնող:

Վերջին 3 ուսումնական տարիներին դպրոցի ղեկավարության և ուսուցիչների ջանքերի և համառ աշխատանքի շնորհիվ ԿԱՊԿՈՒ սովորողների մոտ նկատվել է ուսման նկատմամբ հետաքրքրություն և դրական դինամիկա: 2018թ-ից դպրոցը համագործակցում է Կոտայքի ՏՄԱԿ-ի հետ: ՏՄԱԿ-ի հետ կազմակերպվել են պարբերաբար հանդիպում քննարկումներ, աշակերտնենր, ծնողների, մանկավարժական համակազմի հետ: Դպրոցում ստեղծված է բազմակարծիք, նեռարական և մասնակցային միջավայր: ԿԱՊԿ ունեցող աշակերտների համար առկա է հարմարեցված սանիհանգույց, շարժական թեքահարթակ: Ուսումնական հաստատությունում կարևոր եմ համարում խելամիտ հարմարեցումները, մատչելի միջավայրը:

Հիմք ընդունելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 30 դեկտեմբեր 2022թ 88-Ն հրամանը՝ ուսումնական հաստատությունը կշարունակի որդեգրած քաղաքականությունը համընդհանուր ներառման համատեքստում և կրթական գործընթացի մասնակիցներին կտրամադրի հետևյալ աջակցության ծառայությունները

- ✓ Հարմարեցված և մատչելի միջավայրի ստեղծում
- ✓ Խելամիտ հարմարեցումների տրամադրում
- ✓ Կրթության մատչելիության, նեռարականության, որակի ու արդյունավետության բարձրացում
- ✓ Սովորողի Անհատական ուսուցման պլանով սահմանված աջակցության ծառայությունների տրամադրում:

Հաստատության տնօրենը / քանի որ դպրոցը տնօրենի տեղակալի հաստիք չունի/ և Տարածքային կենտրոնի տնօրենի տեղակալը, համատեղ, երկու ամիսը մեկ անգամ, կիրավիրեն միասնական ժողով՝ ամփոփելու տվյալ ամիսների ընթացքում տրամադրված աջակցության ծառայությունները, արձանագրելու սովորողների ունեցած ձեռքբերումները, առաջընթացը և առկա դժվարությունները, առաջարկներ կներկայացնեն սովորողի մոտ առկա դժվարությունների հաղթահարման աշխատանքների ձևերի և մեթոդաբանության ուղղությամբ: Միասնական ժողովների կհաստատվեն վերը նշված երկու կողմերի կողմից: ԱՈՒՊ-ը և ԱՈՒՊ-ի գնահատման արձանագրությունները հիմք կհանդիսանան Հանրապետական կենտրոնի կողմից իրականացվող մշտադիտարկումների համար: Սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման և Աջակցության ծառայությունների տրամադրման ընթացքում հավաքագրված տգեղեկությունները Տարածքային կենտրոնը և Հաստատությունը կմուտքագրեն Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների տվյալների միասնական բազա: Սովորողի վերաբերյալ մշակված անձնական տվյալները /ցանկացած տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել սովորողի ինքնությունը/, գաղտնի են և չեն կարող փոխանցվել երրորդ անձանց՝ առանց ծնողի / օրինական ներկայացուցչի/ գրավոր համաձայնության: Տվյալների փոխանցումը երրորդ անձանց՝ առանց Ծնողի համաձայնության, հնարավոր է միայն օրենքի սահմանված կարգով:

- ✓ Հաստատության տնօրենը կապահովի առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի ԱՈՒՊ-ով սահմանված խելամիտ հարմարեցումների՝ ուսուցման անհատական տեխնիկական միջոցների և գույքի, սարքավորումների, մատչելի ձևաչափով / տպագիր, աուդիո և վիդեո/ մշակված ուսումնական նյութեր, բանավոր և գրավոր հաղորդակցման այլընտրանքային միջոցներով
- ✓ Պետական բյուջեի միջոցների հաշվին, կստեղծվի Հաստատությունում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ազատ տեղաշարժն ու կրթական Հաստատության երկարօրյա խմբերում, համաձայն ԿԳՄՍ նախարարի 2020թ. հոկտեմբեր 13-ի 38-Ն հրամանի Հավելված 1-ով սահմանված կարգի:

**1.9 Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն**

Ուսուցիչների մասնագիտական որակների զարգացումն են ապահովում հաստատությունում և վերապատրաստող կազմակերպություններում պարբերաբար կազմակերպվող տարատեսակ միջոցառումները, դասընթացները, սեմինար-պարապմունքները, խարհրդատվություններն ու խորհրդակցությունները:

Հաճախակի են դարձել դպրոցում կազմակերպվող համակցված դասերը, հետազոտական և նախագծային աշխատանքների անցկացումը՝ համաձայն Հանրակրթական պետական չափորոշչի և առարկայական ծրագրի, որոնք նպաստում են ուսուցանվող նյութի բովանդակության խորը ընբռնմանը, որը պայմաններ է ստեղծում ամբողջ կյանքի համար անհրաժեշտ հմտությունների ձևավորմանը:

Աշխատակազմի և մանկավարժական համակազմի խրախուսման համար կներդրվի խրախուսման փաթեթ /շնորհակալագիր, պատվոգիր, դրամական պարգև/:

**1.10 Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծությունը՝ դրանց արդյունավետության ցուցանիշների շեղումների և պլանավորման խնդիրների տեսանկյունից**

Դպրոցի ֆինանսավորումը կատարվում է պետբյուջեից՝ ըստ իրականացվող հանրակրթական ծրագրի 1-ին, 2-րդ և 3-րդ աստիճանի՝ կախված սովորողների թվից, իսկ 2023թ. սեպտեմբերից, փոփոխությունների համաձայն, ֆինանսավորումը կրիականացվի դասարան թվով: Հաստատության ֆինանսատնտեսական գործունեության յուրաքանչյուր տարվա նախահաշիվը կազմվել է սահմանված կարգով՝ պահպանելով հանրակրթական ուսումնական հաստատության բյուջետային օրացույցին ներկայացվող պահանջները:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ Կոտայիք մարզպետարանի /լիազոր մարմին/ կողմից հաստատության ՝ յուրաքանչյուր տարվա ֆինանստնտեսական գործունեության նախահաշիվը, հաստիքացուցակը հաստատվելուց հետո տեղադրվել է դպրոցի վեբ կայքում՝ https://jraber.schoolsite.am/: Կայքում է տեղադրվել հաստատության ֆինանսատնտեսական եռամսյա հաշվետվությունները: Վստահորեն կարող

ենք ասել, որ հաստատության ֆինանսատնտեսական գործունեությունը եղել է թափանցիկ և հստակ: Շնորհիվ սովորողների թվի աճի /նախորդ 3 տարիների համեմատ/ բարելավվել է դպրոցի ֆինանսատնտեսական վիճակը: Դպրոցը աշխատել է առանց ֆինանսական խնդիրների, նոր ֆինանսական տարի է մտել բյուջեում ունենալով տնտեսած գումար: Ուսուցիչների դրույքաչափը կազմում է 110000 դրամ:

Հաստատության գլխավոր հաշվապահը պատասխանատու ձևով վարել է հաշվապահական հաշվառումը, ժամանակին են կազմվել ֆինանսական հաշվետվությունները և ներկայացվել լիազոր մարմին:

Վերջին 5 տարիներին, յուրաքանչյուր տարվա վերջին, ամբողջ աշխատակազմը պարգևատրվել է միանվագ դրամական խրախուսանքով:

| **Ցուցանիշները** | **2019-2020 ուստարի** | **2020-2021 ուստարի** | **2021-2022 ուստարի** | **Փոփոխությունների դինամիկան /աճ կամ նվազում/** |
|---|---|---|---|---|
| Դասարանների միջին խտությունը | 6.5 | 7.1 | 7.6 | Աճ |
| Մեկ սովորողի հաշվով հաստատության տարեկան նախահաշիվը | 584256 | 605478 | 606192 | Աճ |
| Ուսուցիչների միջին աշխատավարձը | 119037 | 118903 | 118760 | Նվ |
| Վարչական աշխատողների միջին աշխատավարձը | 200000 | 200000 | 213330 | Աճ |
| Ուսուցիչների վերապատրաստումներ | - | 44800 | 120000 | Աճ |
| Ուսուցիչների տարակարգ | | 11000 | 191900 | Աճ |
| Ուսուցիչների ճանապարհածախս | | 936200 | 1156400 | Աճ |

# ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ, ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| • Դպրոցի տնօրինությունն ունի դպրոցի ղեկավարման և կառավարման փորձ<br>• Համագործակցային և թիմային աշխատանքի իրականացում<br>• Կառավարման ժողովրդավարական ոճ<br>• Դպրոցի բյուջեր արդյունավետ և նպատակային պգտագործում<br>• Ներառական կրթության իրականացման համար համապատասխան աջակցություն ՏՄԱԿ-ի կողմից<br>• Մեթոդական միավորումների համակարգված աշխատանք<br>• Դասագրքերի գնահատման հանձնաժողովի փորձագետ աշխատակցի առկայություն<br>• Բարձր կարգապահություն և պատասխանատվություն<br>• Բոլոր ուսուցիչները ունեն բարձրագույն կրթություն<br>• Լոկալ ջեռուցման համակարգ | • Դպրոցի հարմարեցված շենք<br>• Տարակարգ ունեցող ուսուցիչների քիչ քանակ<br>• Կամավոր ատեստավորում անցած ուսուցիչների բացակայություն<br>• Փոխտնօրենի հաստիքի բացակայություն<br>• Գրադարանային ֆոնդը թվայնացված չէ<br>• Լաբորատորիաների բացակայություն<br>• Ապաստարանի բացակայություն<br>• Սպրոտդահլիճի բացակայություն<br>• Հանդիսությունների սրահի բացակայություն<br>• Բազմամասնագիտական թիմի բացակայություն<br>• Հոգաբարձուների և շրջանավարտների խորհրդի բացակայություն<br>• Հավելյալ աշխատասենյակների բացակայություն<br>• Համակարգչային լիարժեք ժամանակակից սարքավորումնի քիչ քանակ<br>• Ռեսուրս սենյակի բացակայություն |

| | |
|---|---|
| • Հարմարեցված սանհանգույցներ<br>• Վերապատրաստող ուսուցիչների առկայություն<br>• Վերապատրաստումներին ակտիվ մասնակցություն<br>• Կրկնուսույցների մոտ պարապող սովորողների բացակայություն<br>• Տեխնիկայով և գույքով հագեցած ճաշարանի և խոհանոցի առկայություն<br>• Արևային վահանակներ<br>• Շուրջօրյա ջրամատակարարում<br>• Դպրոցի ցանկապատված տարածք ունենալը<br>• Մանկավարժական անձնակազմն ունի բարձր կարգապահություն, մեծ հեղինակություն համայնքում<br>• Աշակերտակենտրոն ուսուցման կարևորում<br>• Մանկավարժական հմտություններ և նորարարական մեթոդների կիրառում<br>• Բարոյահոգեբանական կայուն մթնոլորտ<br>• Հեռավար կրթության հարթակների և գործիքների գերազանց իմացություն<br>• Ռազմահայրենասիրական դաստիարակության առաջնայնություն<br>• Ակտիվ մասնակցություն կամավորական աշխատանքներին | |

| | |
|---|---|
| • Ընթերցասիրություն<br>• Մշակութային միջոցառումներին ակտիվ մասնակցություն<br>• Կառավարման խորհրդի, խորհրդակցական մարնինների պարտաճանաչ և համագործակցային աշխատանք<br>• Ծնողական խորհրդի համագործակցություն համայնքի տարբեր սոցիալական խմբերի հետ<br>• Տեսախցիկների առկայություն<br>• Պահեստի առկայություն<br>• Պահակակետի առկայություն<br>• Բուհ ընդունվող աշակերտների թվի աճ<br>• Անհատական ջրահեռացման համակարգ<br>• Համագործակցություն ԿԶՆԱԿ-ի, ՏՄԱԿ-ի, Զարթնիր ՀԿ-ի, Միասնության թիկունք, Պատանեկան նվաճումներ կազմակերպության և այլ հասարակական կազմակերպությունների հետ<br>• Միասնական թիկունք ՀԿ-ի հետ համագործակցությամբ և դպրոցի ամբողջ անձնակազմի՝ թե մանկավարժակա, թե աշակերտական և թե ծնողական, ակտիվ մասնակցություն քողարկման ցանցեր, գուլպաներ, | |

| | |
|---|---|
| գլխարկներ և ժիլետներ գործելը, ինչպես նաև դրոշներ կարելը՝ 44-օրյա պատերազմից մինչև այսօր<br>• Ոռոգման համակարգի առկայություն<br>• Կոյուղաջրերի հեռացման անհատական համակարգ<br>• Բացօդյա դասարան<br>• Մարզադաշտի առկայություն<br>• Կանչապատ տարածք,<br>• Պտղատու ծառեր | |

## ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Հիմք ընդունելով ‘‘Ջրաբերի միջնակարգ դպրոց’’ ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրությունը՝ բոլոր խորհրդակցական մարմինները պետք է մշակեն իրենց ներքին կանոնադրությունը, որը պետք է համապատասխանի դպրոցի և համայնքի պահանջներին, կարիքներին և հնարավորություններին: Կարևորում եմ բոլոր խորհուրդների ինքնավարությունը, իրենց գործողություններում ազատ լինելու հնարավորությունը և ամեն կերպ բացառում դրանց ձևականությունը:

Խորհրդակցական մարմինների անկողմնակալ և նվիրված աշխատանքի արդյունավետությունից է կախված դպրոցի ընդհանուր վարկանիշը:

Դպրոցում գործում են կառավարման և խորհրդակցական հետևյալ մարմինները՝

- ✓ Կառավարման միացյալ խորհուրդ
- ✓ Մանկավարժական խորհուրդ
- ✓ Աշակերտական խորհուրդ

✓ Ծնողական խորհուրդ




Գծապատկեր 1: Դպրոցի խորհրդակցական մարմիններ

## Մանկավարժական խորհուրդ

Հաշվետու ժամանակաշրջանում յուրաքանչյուր ուսումնական տարվա՝ մանկավարժական խորհրդի օգոստոսյան առաջին նիստին սահմանված կարգով

- Ձևավորել է հաստատության մանկավարժական խորհուրդը 1/ մեկ/ ուսումնական տարի ժամկետով
- Ընտրել մանկավարժական խորհրդի նիստերի մշտական քարտուղար և հաստատել իր աշխատակարգը
- Քննարկվել է հանրակրթության պետական չափորոշչի պահանջների համաձայն՝ հանրակրթական հիմնական ծրագրերի իրագործման հարցերը՝ սովորողների նախասիրություններին և ընդունակություններին համապատասխան, ապահովել նրանց կյանքի և առողջության պահպանումը
- Քննարկվել է ուսուցման բովանդակության , սովորողների ուսումնառության որակի հետ կապված հարցերը
- Քննարկել է առարկայական օլիմպիադաների կազմակերպման և անցկացման հարցերը
- Քննարկել է հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը և հաշվետվությունը, առարկայական մեթոդական միավորումների, դասղեկների, մանկավարժների հաշվետվությունները
- Քննարկվել են հաստատության ներքին աշխատանքայինի կարգապահական և ուսումնառության ներքին կարգապահական կանոնները

**Որոշում է ընդունել**

- Դպրոցի աշխատանքային ռեժիմի և աշխատանքային շաբաթվա տևողությունը սահմանելու մասին
- Սովորողի դասարանից դասարան փոխադրման, ամառային առաջադրանքներ տալու մասին
- Սովորողների քննություններին թույլատրելու, գովասանագրով պարգևատրելու մասին
- Որևէ առարկա ուսումնասիրելուց ազատելու մասին

- ✓ Օրենքով սահմանված կարգով սովորողի նկատմամբ կարգախպահական տույժ կամ խրախուսանքի միջոց կիրառելու մասին
- ✓ Շրջանավարտներին հիմնական կրթության վկայական և միջնակարգ կրթության ատեստատ տալու մասին
- ✓ Դպրոցի ուսումնական գործընթացին վերաբերող այլ հարցերի մասին
- ✓ Քննարկել ու հաստատել է ‘‘Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին դասագրքերի վարձավճարների զիջման փոխհատուցման’’ ծրագրից օգտվող սովորողների ցուցակները ՝ պահպանելով սոցիալական արդարության սկզբունքները
- ✓ Մանկավարժները մասնակցել են հաստատության ‘‘Ներքինկ կարգապահականն’’ կանոնների մշակմանը՝ ելնելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի պահանջներից
- ✓ Ծնողական խորհրդի հետ համագործակցությամբ ամբողջացրել են հաստատության ‘‘Ուսումնառության ներքին կարգապահական կանոնները’’:

Համաձայն գործող կարգի՝ մանկավարժական խորհուրդը իր կազմից հաստատության Խորհրդի կազմում ունի երկու անդամ:

Մանկավարժական խորհրդի անդամների, առարկայական մեթոդական միավորումների նախագահների համար պարբերաբար կազմակերպվել են տեղեկատվական ժողովներ՝ ծանոթացնելով նրանց դպրոցի հիմնարար փաստաթղթերին, օրենսդրական համապատասխան փասռաթղթերին: Այս առումով արդյունավետ են ԿԶՆԱԿ-ի կողմից խորհրդի անդամների վերապատրաստման նպատակով կազմակերպվող վերապատրաստումները:

## Աղյուսակ 1: Ընդհանուր տեղեկություններ ուսուցիչների վերաբերյալ՝ նախորդ 3 ուսումնական տարիների համար

| ՑՈՒՑԱՆԻՇԸ | 2019-2020 ՈՒՍՏԱՐԻ | 2020-2021 ՈՒՍՏԱՐԻ | 2021-2022 ՈՒՍՏԱՐԻ | ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ /ԱՃ ԿԱՄ ՆՎԱԶՈՒՄ/ |
|---|---|---|---|---|
| **Ուսուցիչների ընդհանուր թիվը** | **13** | **13** | **15** | **Աճ** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը կամ դրույքաչափը | 12.6 | 10.4 | 14.1 | Աճ |

Աղուսյակ 2: Ուսուցիչների տարիքային բաշխվածությունը նախորդ 3 ուստարիներին

| Ուսուցիչների թիվը | 2019-2020 Ուստարի | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուստարի | ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ /ԱՃ ԿԱՄ ՆՎԱԶՈՒՄ/ |
|---|---|---|---|---|
| Մինչև 30 տարեկան | 3 | 2 | 2 | Նվ |
| 31-ից 40 տարեկան | 2 | 2 | 4 | Աճ |
| 41-ից 50 տարեկան | 7 | 7 | 4 | Նվ |
| 51-ից 55 տարեկան | | | 2 | Աճ |
| 56 տարեկան և ավելի | 1 | 2 | 3 | Աճ |

**Գծապատկեր 2: Ուսուցիչների տարիքային բաշխվածություն**



**Ծնողական խորհուրդ:**

Հաստատության կանոնադրության համաձայն ` հաշվետու ժամանակաշրջանում հաստատությունում ձևավորվել և գործում է ծնողական խորհուրդը, որը նպաստել է կրթական գործունեության արդյունավետ կազմակերպմանը:

Համաձայն սահմանված կարգի՝ յուրաքանչյուր ուսումնական տարի ձևավորվել են դասարանների ծնողական խորհուրդները և կազմավորվել դպրոցի ծնողական խորհուրդը, ընտրվել է խորհրդի նախագահ, որը համաձայն կարգի, դարձել է մանկավարժական խորհրդի անդամ:

Դասարանական ծնողական խորհուրդների նիստերին մասնակցել են դասղեկները, իսկ դպրոցական ծնողական խորհուրդի նիստերին՝ տնօրենը:

